Հ ա վ ե լ վ ա ծ N 1

ՀՀ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 4-ի N 1431 - Ն որոշման

# Ն Կ Ա Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՀԱՆՔԱՎԱՆԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի հյուսիս-արևմտյան մասում:

Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 5202.86 հեկտար։

Տարածքը հյուսիս-արևմուտքից և հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպասի գյուղական համայնքին, հյուսիսից և հյուսիս-արևելքից «Բ»-«Գ» հատվածով` Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյանի գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Գ»-«Դ» հատվածով` Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արտավազի գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով` Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հանքավանի գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով` Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սարալանջի գյուղական համայնքին, «Զ»-«Է» հատվածով` Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքին, արևմուտքից «Է»-«Ը» հատվածով` Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մեղրաձորի գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Ը»-«Ա» հատվածով` Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Միջնատան գյուղական համայնքին:

## «ՀԱՆՔԱՎԱՆԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ` ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ա»-«Բ»

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Միջնատան և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպասի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային

սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք՝ անցնելով 639 մ, հասնում N 1 սահմանակետին: N 1 սահմանակետից սահմանագիծը թեքվելով հյուսիս-արևելք, ջրբաժանով, N 2-3 սահմանակետերով անցնելով 2494 մ, հասնում է N 4 սահմանակետին: N 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, 2728.0 մ նիշ ունեցող բարձունքով անցնելով 1903 մ՝ հասնում N 5 սահմանակետին: N 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, 2649.5 մ նիշ ունեցող գագաթով, այնուհետև բարձունքներով անցնելով 988 մ՝ հասնում է N 6 սահմանակետին: N 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնելով 771 մ՝ հասնում N 7 սահմանակետին: N 7 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով անցնելով 966 մ՝ հասնում է «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպասի և Շահումյանի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7761 մ է:

### «ՀԱՆՔԱՎԱՆԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ՝ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Բ»-«Գ»

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպասի և Շահումյանի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, անցնում 1112 մ, հասնում 2820.9 մ բարձրություն ունեցող Փարթամ լեռան գագաթին գտնվող N 8 սահմանակետին: N 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, ջրբաժանով անցնելով 913 մ՝ հասնում N 9 սահմանակետին: N 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, բարձունքներով, ջրբաժանով անցնելով 1810 մ՝ հասնում է N 10 սահմանակետին: N 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, 2915.0 մ բարձունքով անցնելով 1167 մ՝ հասնում է 3091.4 մ նիշ ունեցող Չիթհանից լեռնագագաթին գտնվող «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյանի և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արտավազի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5002 մ է:

## «ՀԱՆՔԱՎԱՆԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՎԱԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ՝ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Գ»-«Դ»

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյանի և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արտավազի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը 3066.4 մ և 3045.4 մ նիշ ունեցող բարձունքներով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, անցնում 656 մ, հասնում N 11 սահմանակետին, որտեղից բարձունքներով թեքվում է դեպի արևմուտք, ապա հարավ, անցնում 1189 մ, հասնում N 12 սահմանակետին: N 12 սահմանակետից սահմանագիծը լանջերով, հորիզոնականներին ուղղաձիգ թեքվում է դեպի արևմուտք և հարավ-արևմուտք, N 13-14 սահմանակետերով անցնում 2630 մ, հասնում N 15 սահմանակետին, այնուհետև թեքվում է արևմուտք, հատելով 2388.6 մ նիշ ունեցող N 16 սահմանակետը՝ անցնում 2272 մ, հասնում Երկար գետի ափին գտնվող «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արտավազի և Հանքավանի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6747 մ է:

## «ՀԱՆՔԱՎԱՆԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՔԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ՝ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Դ»-«Ե»

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արտավազի և Հանքավանի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա արևմուտք՝ հատելով 2428.3 մ նիշ ունեցող N 17 սահմանակետը, անցնում 1430 մ, հասնում գետի և առվի հատման տեղում գտնվող՝ 2102.0 մ նիշ ունեցող

N 18 սահմանակետին, ապա լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 981 մ, հասնում N 19 սահմանակետին: N 19 սահմանակետից սահմանագիծը 2491.6 մ և 2506.1 մ նիշ ունեցող բարձունքով թեքվում է դեպի արևմուտք, անցնում 887 մ, հասնում N 20 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, անցնում 195 մ, հասնում 2512.7 մ նիշ ունեցող սարի գագաթին գտնվող N 21 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում է նույն ուղղությամբ, անցնում 706 մ, հասնում Ետնաձոր գետի ափին գտնվող N 22 սահմանակետին: N 22 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է հարավ, անցնում 709 մ, հասնում N 23 սահմանակետին, ապա թամբով թեքվում է նույն ուղղությամբ, անցնում 291 մ, հասնում N 24 սահմանակետին: N 24 սահմանակետից սահմանագիծը կրկին ջրբաժանով թեքվում է հարավ-արևելք, հատելով 2462.3 մ նիշ ունեցող կետը՝ անցնում 568 մ, հասնում առվի եզրին գտնվող N 25 սահմանակետին, ապա լանջով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 519 մ, հասնում N 26 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք՝ հատելով 2342.08 մ նիշ ունեցող 2 առուների հատման տեղը, անցնում 850 մ, հասնում N 27 սահմանակետին: N 27 սահմանակետից սահմանագիծը 2300.0 մ նիշ ունեցող հորիզոնականի ուղղությամբ թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, անցնում 683 մ, հասնում 3 առուների հատման տեղում գտնվող N 28 սահմանակետին: N 28 սահմանակետից սահմանագիծը 2415.2 մ, 2459.8 մ, 2485.7 մ նիշ ունեցող կետերով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1117 մ, հասնում N 29 սահմանակետին, այնուհետև թեքվում է արևմուտք, անցնում 418 մ, հասնում «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սարալանջի և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հանքավանի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9354 մ է:

«ՀԱՆՔԱՎԱՆԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ՝ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ե»-«Զ»

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սարալանջի և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հանքավանի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, ջրբաժանով, N 30 սահմանակետով անցնում 947 մ, հասնում «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սարալանջի և Լուսագյուղի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 947 մ է:

«ՀԱՆՔԱՎԱՆԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ՝ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Զ»-«Է»

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սարալանջի և Լուսագյուղի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է 2781.6 մ նիշ ունեցող բարձունքի գագաթին, սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, ջրբաժանով, N 31 սահմանակետով անցնում 2001 մ, հասնում «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Լուսագյուղի և Մելիքգյուղի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2001 մ է:

«ՀԱՆՔԱՎԱՆԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԼԻՔԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ՝ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Է»-«Ը»

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Լուսագյուղի և Մելիքգյուղի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք,

ապա հյուսիս արևմուտք, Ծաղկունյաց լեռնաշղթայով հատում 2742.0 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող N 32 սահմանակետը, անցնում 3434 մ, հասնում N 33 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, Ծաղկունյաց լեռնաշղթայով անցնելով 1668 մ՝ հասնում «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մելիքգյուղի և Միջնատան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5102 մ է:

## «ՀԱՆՔԱՎԱՆԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԻՋՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ՝ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ը»-«Ա»

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մելիքգյուղի և Միջնատան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանով անցնում 1114 մ, հասնում «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Միջնատան և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպասի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1114 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 4-ի N 1431 - Ն որոշման

ՔԱՐՏԵԶ
«ՀԱՆՔԱՎԱՆԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ